ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՆԵՐԻՆ ՀՈՂՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԽՆԴԻՐԸ 1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Գ. Վ. ՇԱՌՈՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

Սովետական Հայաստանի 1920-ական թվականների հողային հարաբերությունների պատմության մեջ կարևոր տեղ է գրավում նաև արտասահմանից հայրենիք վերադարձած հողագործ հայերին հողի հետ կապելու խնդիրը։ Սովետական կառավարությունը նկատի ունենալով արտասահմանում դեգերող հայ գաղթականության բուռն ձգտումը դեպի Հայաստան և հաշվի առնելով այն ժամանակվա իր հողային ու ֆինանսական հնարավորությունները, ծրագրեց հայրենի երկիր ընդունել առաջին հերթին այն պանդուխտ հայ աշխատավորներին, որոնց վիճակը օտարության մեջ առավել ծանր էր ու տառապալից։

Առաջին մասսայական ներգաղթը տեղի ունեցավ 1921 թ. վերջերին և 1922 թ. սկզբներին, երբ Միջագետքից Սովետական Հայաստան եկան 9 հազարից ավելի արևմտահայ հողագործ գաղթականներ, թեև սակավահողության և տնտեսական քայքայվածության հետևանքով, Հայաստանի համար չափազանց ծանր խնդիր էր այդպիսի մեծ բազմության ընդունումն ու տեղավորումը։ Պիտի հիշել, որ իր բացասական դերն էր կատարում նաև 1922 թ. նորից գլուխ բարձրացրած սովը։

Բացի արտասահմանում եղած հայ պանդուխտներից, Սովետական Հայաստան էին ձգտում գալ նաև եղբայրական հանրապետություններում (Վրաստան, Ադրբեջան) ապաստանած արևմտահայ գաղթականներից շատերը։ Սակայն ստեղծված իրադրությունը ստիպում էր, որպեսզի հանրապետության հողժողկոմատը հարց հարուցի ՀՍՍՀ Կենտգործկոմի առաջ՝ սահմանափակելու հայրենադարձությունը, մանավանդ, եթե այն կապվում էր հայրենիք վերադարձողներին հողով բավարարելու հարցի հետ[1]։ 1922 թ. դեկտեմբերին ՀՍՍՀ Կենտգործկոմը որոշում է կազմակերպված, պլանային ներգաղթ թույլատրել արտասահմանից, իսկ սովետական հանրապետություններում գտնվող արևմտահայ գաղթականության ներգաղթը Սովետական Հայաստան առայժմ չսկսել[2]։ Այդ առթիվ հատուկ որոշում է ընդունում նաև ՀՍՍՀ ԿԳԿ-ի նախագահությունը[3]։ Միաժամանակ Սովետական Հայաստանի կառավարությունը շարունակում է հայրենադարձության իր քաղաքականությունը։ Նա խնդիր է դրնում՝ ընդառաջել արտասահմանում եղած պանդուխտ հայ աշխատավորության Հայաստան գալու ձգտումներին, հայրենադարձությանը տալով առավել նախապատրաստված ու կազմակերպված բնույթ։ Ներգաղթողների համար նախօրոք

---

1 Տե՛ս ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (այսուհետև՝ ՀՍՍՀ ՀՀՍՇՊԱ), ֆ. 40, ց. 1, գ. 3, թ. 87։

2 Տե՛ս ՍՄԿԿ ԿԿ առընթեր Մարքսի հայկական մասնաճյուղի արխիվ (այսուհետև՝ Մարքսի արխիվ), ֆ. 1, ց. 1, գ. 371, թ. 31։

3 Նույն տեղում, ց. 2, գ. 419, թ. 15։

պետք է ստեղծվեին ու առանձնացվեին մշակելի նոր հողատարածություններ, հատկացվեին բնատեղեր՝ կառուցված բնակարաններով, տրամադրվեին երկարատև վարկեր՝ արտադրամիջոցներ ձեռք բերելու համար և այլն։

Սովետական Հայաստանի կառավարության նախաձեռնությամբ հայրենադարձության հարցը լուրջ քննության առարկա է դառնում ԱՍՖՍՀ-ի ղեկավար մարմիններում։ 1924 թ. մարտի 17-ին ԱՍՖՍՀ ԿԳԿ-ի նախագահությունը որոշում է Սովետական Հայաստանում վերաբնակեցնել 10.000 հայրենադարձներ. դրա իրագործման նախապայման էր համարվում Սարդարապատի տափաստանը ոռոգելի դարձնելը։ ՀՍՍՀ հողժողկոմատի վրա պարտականություն է դրվում՝ կազմել և ԱՍՖՍՀ ԿԳԿ-ի նախագահության հաստատմանը ներկայացնել Սարդարապատի տափաստանի ոռոգման և արտասահմանից 10.000 հայերի տեղափոխման ծախսերի նախահաշիվը։ Տասն օր անց այդ նախահաշիվը, որով նախատեսվում էր հատկացնել 1.680.366 ռ., արդեն պատրաստ էր[4]։

Բնական է, որ մեծ թվով վերաբնակիչների ընդունումը, հողաբաժնով ու աշխատանքով անմիջապես ապահովելը անհնար էր։ Դա կատարվելու էր տարիների ընթացքում՝ վերաբնակեցման հողային ֆոնդ ստեղծելու և ներգաղթը ֆինանսապես ապահովելու միջոցով։ Ըստ որում ՀՍՍՀ ԺԿՍ-ի 1924 թ. հոկտեմբերի 15-ի որոշմամբ հանրապետության համապատասխան օրգանների վրա էին դրվել հայրենադարձ հայերի ընդունման ու տեղավորման հետ կապված կոնկրետ պարտականություններ[5]։

Անհրաժեշտ նախապատրաստությունից հետո, 1924 թ., Թուրքիայից և Հունաստանից Սովետական Հայաստան են տեղափոխվում 2645 արևմտահայ գաղթականներ, որոնք հիմնականում տեղավորվում են Լենինականի, Էջմիածնի և Երևանի գավառներում, բավարարվում հողաբաժնով և անցնում հանրօգուտ աշխատանքի։ Նորեկների թվում կային նաև «թանկարժեք բույսեր մշակող մասնագետներ»[6]։

1925 թ. դարձյալ Թուրքիայից, Հունաստանից, ինչպես նաև Միջագետքից

---

4 Նույն տեղում, ց. 3, գ. 21, թ. 8 և ՀՍՍՀ ՀՀՍԵՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 42, թ. 24։ Այդ կապակցությամբ նկատենք. Հ. Ու. Մելիքսեթյանն իր թեկնածուական դիսերտացիայի ավտոռեֆերատում (էջ 24—25) գրում է, որ ԱՍՖՍՀ ԿԳԿ-ի նախագահությունը 10.000 հայ գաղթականներին Սովետական Հայաստան բերելու և Սարդարապատի հարթավայրում վերարնակեցնելու վերաբերյալ որոշումը կայացրել է 1924 թ. մարտի 3-ին։ Նույնը կրկնված է նաև «Հայ ժողովրդի պատմության» VII հատորում (էջ 553)։

Բայց պատմական իրողությունն այն է, որ այդ օրը (1924 թ. մարտի 3-ին) ԱՍՖՍՀ-ի ԿԳԿ-ի նախագահությունը որոշում է արտասահմանից Անդրկովկաս (ոչ թե միայն Հայաստան) բերել 10.000 հայ գաղթականների և հնարավորության սահմաններում նրանց տեղավորել Վրաստանում և Հայաստանում։ Այդ առթիվ ստեղծված հանձնաժողովի նախագահ Աղամալի-օղլու զեկուցումը մարտի 17-ին լսելուց հետո է, որ ԱՍՖՍՀ ԿԳԿ-ի նախագահությունը որոշեց արտասահմանից ներգաղթող հայ գաղթականներին տեղավորել միայն Սովետական Հայաստանում՝ Սարդարապատի տափաստանում։

Նկատենք, որ Ֆրիտյոֆ Նանսենի գլխավորած հանձնաժողովը, 1925 թ. հուլիսի 1-ին, Սովետական Հայաստանի կառավարությանը ներկայացրած իր պլան-հուշագրի մեջ նպատակահարմար էր համարում Սարդարապատի դաշտի փոխարեն առաջին հերթին ոռոգելի դարձնել ու շորացնել Արևմտյան և Արևելյան ղոները, Սև ջրի ու Զանգիբասարի ճահիճները, ընդամենը՝ 38.000 դեսյատին հող, որը պահանջում էր 5 մլն. ռ. ծախս։ (Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 2, էջ 36, 42—43)։

5 Տե՛ս Մլի արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 112, թ. 55։

6 «Խորհրդային Հայաստան 1920—1925», Երևան, 1926, էջ 69։

Սովետական Հայաստանում վերաբնակեցվում են 4174 պանդուխտ հայ աշխատավորներ[7]։

Այդ խմբում եղած բանվորներն ու արհեստավորները բնակություն են հաստատում հանրապետության քաղաքներում, իսկ հողագործները ժամանակավորապես տեղավորվում են Դավալու գյուղում։ «Այդ գաղթականության համար, —ասված է ՀՍՍՀ ՆԳԺԿ-ի զեկուցագրում,— վերջնական բնակավայր ընտրված է Արաղդայանի շրջանը, որտեղ... սկսվել են երեք գյուղ կառուցելու և գաղթականներ հողով բավարարելու հետ կապված նախնական հողաշինարարական աշխատանքները»[8]։

Հայրենադարձ հայերի թիվը, որոնց մեծ մասը հողագործներ էին, 1924—1925 թթ. հասավ շուրջ 6800-ի։ Հաջորդ տարում, թեև սահմանափակվել էր «գաղթականների մասսայական ընդունելությունը»[9], Ստամբուլից Սովետական Հայաստան տեղափոխվեցին 2275 արևմտահայ հողագործներ, արհեստավորներ ու բանվորներ։ 1927—1929 թթ. Հունաստանից, Թուրքիայից, Ֆրանսիայից և Ամերիկայից հայրենադարձվում է ևս 7022 մարդ։

Այսպիսով, սովետական իշխանությունը հետևողականորեն իրագործում էր հայրենադարձություն կազմակերպելու իր քաղաքականությունը, որն ուղեկցվում էր մշակելի հողատարածությունները ավելացնելու, ոռոգման ցանցը վերականգնելու ու նոր ջրանցքներ կառուցելու ուղղությամբ կատարվող լայն միջոցառումներով։

1923 թ. մայիսին ավարտվեց Էջմիածնի ջրանցքի կառուցումը, որով ոռոգելի դարձավ 1200 դեսյատին հող։ 1924 թ. գործի դրվեց Էվջիլարի ջրանցքը 1500 դեսյատին հող ոռոգելու համար։ Շիրակի Լենինի անվան ջրանցքի շահագործմամբ ոռոգելի դարձավ 13.000 դեսյատին հողատարածություն։ Աստիճանաբար կարգի էր բերվում Արաղդայանի ջրանցքը։ Ձեռնարկվել էր նաև ճահիճների չորացման մեծ աշխատանք, որով պիտանի էր դարձվում շուրջ 31.000 դեսյատին հող (Ղամարլուի, Զանգիբասարի, Դավալուի, Արաղդայանի շրջաններում և Սև-Ջրի ակունքների մոտ)[10]։ Եթե. 1925 թ. Սովետական Հայաստանում ոռոգելի հողատարածությունը կազմում էր 87.000 հեկտար, ապա 1926 թ. այն հասավ 107.100, 1927 թ.՝ 114.000, իսկ 1928 թ.՝ 119.000 հեկտարի[11]։

Այդ ամենը, սակայն, դեռևս հնարավորություն չէին ընձեռում մեծ թվով մարդիկ վերաբնակեցնել Սովետական Հայաստանում։ ՀՍՍՀ-ԿԳԿ-ի նախագահությունը դեռևս ստիպված էր մերժել ոչ քիչ թվով այն արևմտահայ գաղթականների դիմումները, որոնք ապաստանել էին Շամխորի գավառի Ջարդախլու, Ջագեր, Ղաբաբաղի Խանձաձոր գյուղերում[12] ու Գանձակում[13] և այլն։

Ինչպես ասվեց, 1920-ական թվականներին սովետական կառավարությունը, Հայաստանի ընդհանուր սակավահողության պատճառով, ստիպված էր մերժել սովետական եղբայրական հանրապետություններում, մասնավորապես Ադրբեջանում, վերաբնակված արևմտահայ գաղթականների դիմումները՝ Հա-

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

9 ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 6, գ. 25, թ. 11։

10 Տե՛ս «Խորհրդային Հայաստան. 1920—1925», էջ 126։

11 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 26, թ. 1։

12 Տե՛ս ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 317, թ. 44 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 63, թ. 60։

13 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 214, թ. 152։

յաստան տեղափոխվելու վերաբերյալ։ Իր ուշադրությունն ու հնարավորությունները կենտրոնացնելով արտասահմանում դեղերող հայ գաղթականների հայրենադարձության վրա, Սովետական Հայաստանի կառավարությունը կարողացավ 1920-ական թվականներին արտասահմանյան տարբեր երկրներից ընդունել ավելի քան 26 հազար ներգաղթող հայերի[14]։ Ըստ տարիների և երկրների, հայրենադարձությունն ուներ հետևյալ պատկերը[15]։

Տարեթիվը	Ներգաղթողների թիվը	Գերազանցապես եկել են	Ներգաղթողների հիմնական զբաղմունքը
1922	9192	Միջագետքից	հողագործներ
1923	932	Վանի շրջանից	հողագործներ
1924	2645	Հունաստանից, Ստամբուլից	հողագործներ
1925	4174	Հունաստանից, Ստամբուլից, Միջագետքից	հողագործներ, արհեստավորներ, բանվորներ
1926	2275	Ստամբուլից	հողագործներ, արհեստավորներ
1927	1280	Հունաստանից, Թուրքիայից, Ստամբուլից	արհեստավորներ, հողագործներ
1928	4910	Հունաստանից, Ստամբուլից	հողագործներ, արհեստավորներ
1929	832	Ֆրանսիայից, Թուրքիայից, Ամերիկայից, Հունաստանից	այգեգործներ, հողագործներ, արհեստավորներ

Վերը բերված աղյուսակը ցույց է տալիս. ա) որ Սովետական Հայաստանի կառավարությունը, չնայած հանրապետության ընդհանուր սակավահողությանն ու տնտեսական ծանր վիճակին, մտահոգված լինելով արտասահմանում դեգերող հայ աշխատավորների ճակատագրով, հնարավորություններ է ստեղծում՝ մայր երկրում ընդունելու մեծ թվով հայրենադարձների, բ) որ հայրենադարձ հայերը գերազանցապես եկել են Միջագետքից, Թուրքիայից և Հունաստանից, գ) որ նրանք մեծ մասամբ հողագործներ էին և գյուղական աշխատավորներ։

Այն միաժամանակ ցույց է տալիս, որ արտասահմանից ներգաղթած և Սովետական Հայաստանում օթևանած հայ աշխատավորների մեծ մասը՝ մոտ 17000 հոգի, եկել է 1920-ական թվականների առաջին կեսին։ Դրանք այն տարիներն էին, երբ մի կողմից՝ սովետական եղբայրական հանրապետությունների օգնությամբ, մեծ դժվարություններով ու հսկայական միջոցների ներդրմամբ, ապաքինվում էին պատերազմական տարիներին և դաշնակների իշխանության ժամանակ Հայաստանի տնտեսությանը հասցված ծանր վերքերը, և մյուս կողմից՝ ագրարային վերափոխումների միջոցով լուծվում էր աշխատավոր գյուղացիությանը հողաբաժնով ապահովելու սոցիալ-քաղաքական մեծ նշանակություն ունեցող դժվարին պրոբլեմը։

Աղյուսակից երևում են նաև ներգաղթի ելևէջները, նրա շեշտակի տատանումներն ըստ տարիների։ Ներգաղթի այդ կորագիծը կրկին անգամ ցույց է տալիս, որ հայ աշխատավորների ներգաղթը արտասահմանից Սովետական

14 Տե՛ս «Հայ ժողովրդի պատմություն», հ. VII, Երևան, 1967, էջ 557, 577։

15 «Խորհրդային Հայաստան 1920—1925», էջ 69 և ՀՍՍՀ ՀՀՍԾՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 131, թ. 6, ց. 16, գ. 897, թ. 20, ֆ. 113, ց. 3, դ. 337, թ. 9։

Հայաստան իրոք կապված էր հողային ու ֆինանսական լուրջ դժվարությունների հետ։

ՀՍՍՀ Ժողկոմսովետը 1924 թ. հոկտեմբերի 15-ի նիստում քննարկում է արտասահմանից ներգաղթած և Հայաստանի գյուղերում տեղավորված հողագործ բնակչության դրությունը բավարարելու միջոցառումների հարցը և որոշում այդ նպատակով բաց թողնել համապատասխան գումարներ. «Հանձնարարել ներքգործժողկոմատին,— ասված էր որոշման մեջ,— այդ գումարի մեծ մասը օգտագործել գաղթականներին հողի հետ կապելու համար անհրաժեշտ գյուղատնտեսական ինվենտար ձեռք բերելու նպատակով»[16]։

Բավական մեծ ջանքեր թափվեցին Արաղդայանի շրջանում վերաբնակված արևմտահայերի 361 ընտանիք տեղավորելու և հողով բավարարելու ուղղությամբ։ Դեռևս 1925 թ. սեպտեմբերի 28-ին ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը քննության առնելով արտասահմանից ներգաղթողներին տեղավորելու հարցը, որոշում է նրանցից շուրջ 1500 հոգու բնակեցնել Արաղդայանի շրջանում և ապահովել հողաբաժնով[17]։

Մշակված պլանի համաձայն, վերոհիշյալ 361 հայրենադարձ ընտանիքը (1086 շունչ) մինչև հատկացված մշտական բնակավայրեր մեկնելը, ժամանակավորապես տեղավորվում են Դավալուում կառուցված բարաքներում և ստանում նյութական օգնություն։ Կառավարության որոշմամբ, նորեկները պետք է մշտական բնակություն հաստատեին Արաղդայան, Արմաշ (Յայջի), Ավշար և Սմո գյուղերում[18]։ Մինչ այդ տարվում է անհրաժեշտ նախապատրաստական աշխատանք՝ կատարվում են նոր հիմնադրվող բնակավայրերի հատակագծումներ (օրինակ, Ավշար և Յայջի գյուղերը), հողաբաշխական աշխատանքներ, որոշվում է ամեն մի գյուղում հաստատվող ներգաղթողների քանակը և այլն։

Արաղդայանի շրջանում վերաբնակված հայրենադարձ հայերի այդ մեծ խմբերին տրամադրվեցին պետական հողատարածություններ՝ շնչին կես դեսյատինի հաշվով՝ Արաղդայանում՝ 191 դեսյատին, Արմաշում՝ ավելի քան 227 դեսյատին, Ավշարում՝ 62 դեսյատին, Սմոյում՝ 82 դեսյատին հող։ Կարճ ժամանակում՝ մինչև 1926 թ. ապրիլի 7-ը, վերոհիշյալ գյուղերի հողաչափական և հողաշինարարական աշխատանքներն ավարտվում են։ Հայրենադարձներին առանձնացված հողամասերը վարում ու ցանում է պետությունը։

Անհրաժեշտ նախապատրաստությունից հետո հողային մարմինները Վեդիում տեղավորված 361 հայրենադարձ ընտանիքները 1926 թ. ապրիլից տեղափոխվում են նրանց հատկացված մշտական բնակավայրերը՝ Արաղդայանում՝ 110 ընտանիք (311 շունչ), Արմաշում՝ 163 ընտանիք (454 շունչ), Ավշարում՝ 37 ընտանիք (125 շունչ) և Սմոյում՝ 45 ընտանիք (164 շունչ)։ Միաժամանակ միջոցառումներ են ձեռնարկվում, որպեսզի բարելավվեն և բնականոն ընթացքի մեջ դրվեն հայրենադարձների ապրելակերպը, կենցաղը, բուժսպասարկումն ու կրթական գործը. հիմնվում է ամբուլատորիա, հիվանդանոց, բացվում են դպրոցներ։ Բնակարաններ կառուցելու համար հայրենադարձներին տրամադրվում է անհրաժեշտ շինանյութ, հատկացվում ֆինանսական լրացուցիչ միջոցներ։

16 ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 41, թ. 29։
17 Տե՛ս Մլի արխիվ, ֆ. 1, ց. 4, գ. 2, թ. 75։
18 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 82, թ. 53։

1927 թ. հանրապետության տնտեսական խորհրդի որոշմամբ միայն գյուղատնտեսական գործիքներ ձեռք բերելու համար նրանց տրամադրվում է 50.000 ռ.[19]։

Գյուղերում տեղավորվում և հողաբաժիններ է ստանում նաև 1927 թ. Հունաստանից և Թուրքիայից ներգաղթած հայերի մի մասը։ Նրանք հաստատվում են Ախտայի, Կոտայքի, Ղուրդուղուլիի և Արաղդայանի շրջանների գյուղերում՝ Ջառում՝ 4 ընտանիք (17 շունչ), Բջնիում՝ 14 (53 շունչ), Ալափարսում՝ 11 (29 շունչ), Արաղդայանում՝ 4 (10 շունչ), Արմաշում՝ 18 (65 շունչ), Ղուղիգիգանում՝ 8 (27 շունչ), Քյալագարխում՝ 33 (112 շունչ), Մեծ Շահրիայում՝ 37 (150 շունչ), Մոլլաբայազետում՝ 36 (109 շունչ), Սարդարապատում՝ 4 (14 շունչ)[20]։

Նույն կարգով, 1928—1929 թթ. արտասահմանից Հայաստան ներգաղթած հայ հողագործները տեղավորվում են հանրապետության տարբեր շրջաններում (Ղուրդուղուլի, Ղամարլու, Մարտունի, Արաղդայան և այլն), կապվում հողի հետ, պետությունից ստանում նյութական ու ֆինանսական օգնություն և «բացառապես զբաղվում են հողագործությամբ»[21]։

Այսպիսով, 1920-ական թվականներին արտասահմանյան զանազան երկրներում դեգերող արևմտահայ գաղթականներից Սովետական Հայաստանում վերաբնակություն հաստատած ավելի քան 26.000 հայ աշխատավորներ տեղավորվում են հանրապետության տարբեր շրջաններում ու քաղաքներում, ապահովվում աշխատանքով ու ստանում ապրուստի անհրաժեշտ միջոցներ։ Հողագործ աշխատավորները, որոնք կազմում էին հայրենադարձների մեծ մասը, վերահաստատվում են տասնյակ գյուղերում և տեղացի գյուղացիների հետ դառնում համահավասար հողօգտագործողներ։ Դա Սովետական Հայաստանի 1920-ական թվականների հողային հարաբերությունների պատմության կարևոր և ուշագրավ կողմերից էր։

ОБЕСПЕЧЕНИЕ НАДЕЛЬНОЙ ЗЕМЛЕЙ РЕПАТРИИРОВАННЫХ АРМЯН В 20-ых ГОДАХ

Г. В. ШАРОЯН

Доктор исторических наук

Резюме

В истории земельных отношений Советской Армении 1920-ых годов важное место занимает проблема обеспечения надельной землей репатриированных армян. В течение 1922—1929 гг. из Месопотамии, Турции, Ирана, Греции, Франции, Америки в Советскую Армению приехало более 26.000 армян.

Значительная часть репатриантов была размещена в деревнях, где наравне с местными крестьянами получила надельную землю. Одновременно органами местной власти был осуществлен ряд мероприятий по улучшению бытовых условий репатриантов. Став полноправными гражданами советской страны, репатрианты принимали активное участие в социалистическом переустройстве республики.

19 Տե՛ս ՄԼԻ արխիվ, ֆ. 1, ց. 9, գ. 240, թ. 1։

20 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇՊԿԱ, ֆ. 123, ց. 42, գ. 105, թ. 1։

21 Նույն տեղում, գ. 131, թ. 6։